



## **Ֆինանսական վերլուծությունների և հսկողության բաժնի մասնագետ**

### **Աշխատանքի նկարագրություն**

Հաշվեկշռային և եկամուտ/ծախսի ցուցանիշների վերլուծություն:

### **Աշխատանքային պարտականություններ**

- Բանկի փաստացի հաշվեկշռային հոդվածների ու պլանային ցուցանիշների համեմատականի կազմում
- Բանկային համակարգի և Հայբիզնեսբանկ ՓԲԸ-ի համեմատական ցուցանիշների, ինչպես նաև ընդհանուր բանկի և մասնաճյուղերի ցուցանիշների վերլուծություն
- Բանկի մասնաճյուղերի տվյալ ամսվա և աճողական եկամտային և ծախսային հոդվածների ամփոփում, պլանային և փաստացի տվյալների համեմատականի կազմում
- Մասնաճյուղերի ֆինանսական ցուցանիշների հիման վրա բաշխման ենթակա բոնուսների հաշվարկում
- Մասնաճյուղերի ոչ տոկոսային ծախսերի առանձին հոդվածների սահմանաչափերի որոշում
- Բանկի ոչ տոկոսային ծախսերի և ձեռքբերումների վերահսկում, պլանային ցուցանիշների գերակատարման հնարավոր կամ փաստացի դեպքերի բացահայտում
- Նոր բացվող մասնաճյուղերի ֆինանսական ցուցանիշների կանխատեսում
- Այլ վերլուծություններ

## **Անհրաժեշտ պահանջները**

- Բարձրագույն կրթություն տնտեսագիտության կամ ֆինանսների ոլորտում
- Առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ ֆինանսաբանկային համակարգում
- Վերլուծական ունակություններ
- Ստեղծագործական և ռազմավարական մտածելակերպ
- Հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուների լավ իմացություն
- Microsoft Excel իմացություն կոնսոլիդացիոն որպես առավելություն
- Աճի և զարգացման ձգտում

## **Դիմելու ընթացակարգը**

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը [hr@armbusinessbank.am](mailto:hr@armbusinessbank.am) հասցեին:

**Վերջնաժամկետ՝ 24.03.2023թ.:**

Խնդրում ենք նամակի թեմա (subject) դաշտը լրացնել նշելով պաշտոնը և Ձեր անուն, ազգանունը հետևյալ կերպ՝ **"Financial Analysis and Control Specialist - Name, Surname"**: